

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ,

ԳԱՅԹԱԿՂԻՄ

Փաւուսոս Բիբանդ. Պատ. տպ. Վ. Անես. 1865, էջ 126
Կիրակոս Գանձակցիք » » 1888, էջ 47

Ամենածանօթ բառ մըն է ցայրակղիը, և սակայն ծպտեալ երեսյթի տակ ալ ներկայացած ըլլալով՝ մեզի, յաշողեր է նոյն իսկ զշայր Ալիշան գայթակղեցնել:

Փաւուսոս Բիբանդ կը պատմէ. «Ըստոհման Ռշտունեաց և գտոհմ Արծունեաց բառնային ի միջոյ առանց ամենայն վասու և յանցման և. Յայնմ ժամանակի ի ցայրակղի գտանէին ի դայեակս մանկուն փախստեայս» ևայն:

Նոորագիր բառը մտածել կու տայ իւր իմաստի մասին. — և անա «Ուզգագրութիւնը ազգային մատենագրաց»ի մեծարգոյ Հեղինակը (Հ. Գարբ, Նահապետեան, Վենետիկ, 1907, էջ 67) օրինակողի վրիպակ համարելով՝ կ'առաջարկէ ուղղել զայտագոյի:

Ուրիշ տեղ մ'ալ կը հանդիպինք մի և նոյն իմաստով գործածուած բայ' արմատին — կիրակոսի «Պատմութիւն Հայոց»ին մէջ — որ նոյնպէս իւր անհալութեանը մասին տատամամլի կու տայ, Այս զրբին առաջին տպագրութիւնը «ի լոյս ընծայեաց Ռոկան Տէր Գէորգեան Յովհաննիսեանց Երևանցի» ի Մոսկուա, ի տպարանի Արևելեան Լեզուաց Ճեմարանի Տեարց Լազարեանց, 1858»: Բայց այս չակերտի մէջ առնուածէն՝ ուրիշ ոչ մէկ տեղեկութիւն ունինց հրատարակչէն թէ արդեօք ի՞նչ ձեռագիրներու կամ ձեռագրի վրայէ կատարեացաւ, և այլն: Նոյն այդ «տպագրութիւնն արտատպուած է» 1910ին Թիֆլա, (Պուկասեան մատենադարան Գ. — տպ. Օր. Ն. Աղանեանի),

Հին տպագրին էջ 139 (իսկ նոր. 225) կը կարդանք. «Զիշխանութիւն նորա (— իւնինէի) վարէր որդի նորա, և ոչ էին կարող զդէմ ունել անհնարին բրոյն ե-

կելոյ. վասն այնորիկ անձնապահ եղեն ամենեցնեան, զարդեալը յամրոցս, ուր և կարացին»:

Ուսինց նաև միջանկեալ տպագրութիւնն մը նոյն Պատմութիւն՝ լոյս տեսած Ա. Ղազարը՝ 1865ին «Լուսարաննեալ» Հայր Ալիշանի ձեռոց՝ թէս պատկառելի Հանճարը (ինչպէս նաև շատ մը այլ հրատարակութեանց վրայ) իւր անունն ալ — գէթ տասացի — զրոշմել՝ սնապարծութիւն համարեր է: Հ. Ալիշան իւր բազմահմուտ և երկայն Յառաջարանին մէջ կը զրէ. Միբ ձեռը հասած զաղափարները՝ «որք երեք միայն էին, և ոչ մին ի նոցանէ զին կամ զգասս գրչութիւն, . . . նօտրագիրը Ժէ դարու, բազմախալը և թերարանը. վասն որոյ հարկ համարեցաց ուրքը թողու որպէս և էրն և ուրքը ուղղել զայտագոյի վրիպակ» որպէս անկն էր լինել, և զթերի բառն յաւելուլ նօտրացի զրոշմերով, կամ ի փակագծի ամփոփելով զթերին՝ զոր առաք ի Դ օրինակէ, և է սա անսեմենեթ տպագիրն փոքրացիր յիւնայայ (... և այլն), առանց ինչ բնաւ ծանօթութեան զսկրնագիր գրոցն. որով՝ թէպէս և բազում ուրքը ընտիր քան զգմբրն երեւեցաւ նորա օրինակն, այլ ոչ կարացաց համօրէն վստահ լինել, ոչ զիւտելով զափի հաւատարմութեանն կամ զուղղագրութեան զոր արժանն իցէ համարեալ վարել յիւրում տպագրին. վասն որոյ և ուրքը ի ստորև ի լուսանցս զրոցս նշանակեցաց զտարածայնութիւն սորա ի մերոցս, որպէս և զմերոց օրինակաց ի նորայոյն, կամ զսխալ սոցա. նշանակելով որպէս ի վարդանայ պատմութեանն, 00, և իմանալով զամենայն օրինակն», և այլն. Արդ՝ վերսիշեալ հատուածի ընդգծուած բառն ալ հին տպագրին համաձայն զադրեալ զնելով (էջ 126) կը ծանօթագրէ. 00. ցայրակղինայ. սակայն եթէ յիշեր նաև Փաւուսոսի անսեմենեթ խօսքը, պիտի մերժէր անշուշտ Գաղրեալը՝ ապահովագրելու համար նաև Գայրակղին, որոնք երկուքն ալ փոխադարձ լոյս կու տան իրարու:

ԳԱՅԹԱԿՂԻՄԸ՝ բացի Բառգիրքներու տուած ամենածանօթ իմաստներէն՝ սերտ առնչութեամբ՝ կը նշանակէ նաև

1. — Փախչիլ (տեղ մը) իյնալ. խուսափել.

Աահմուկելով (տեղ մը) իյնալ. ճողութիւն.

Աս'դին ան'դին իյնալ, թափառիլ
Ամէն ձակ'ծուկ մտնել, »
(Գաղտագողի) փախչիլ ազատիլ,
Փախչելով գաղթել.
Թողնել հեռանալ. վտարանդիլ.

Ուրիշ պարագաներու և ուրիշ խօսքերու մէջ (մանաւանդ ըստ արդի առման).

2. — Երւոր գաղափար կազմել (մէկու մը վրայ)

Վատ ապաւորութիւն ունենալ,
Ցած կամ յորի կարծիքի մէջ իյնալ.
(Մէկու մը վրայ) ունեցած համար բումը կորսնցնել.

Յուսախար ըլլալ.
— և այլն:

Յամենայն դէպս փախչիլ և իյնալ բառերու իմաստը իւր տակը կը հովանաւորէ:

Խակ «Գործ գայրակեցի» ըսել է՝ Գործ խոսակիւի, (ուսկից պէտք է փախչիլ հնառու տեղ իյնալ). և Գայրակդուրիւմ է խորշելի կամ չար գործ՝ ուսկից ամէն ոց կը փախչի (Կ'իյնայ հեռուն):

Հ. Գր. Ա. Դաշտան,

ԱՆՁՏԵԽԻՒՆ ԱՎԱՐՈՒԽԱԲ

Գիշերին մէջէն աղմուկն անձրէին կը յիշեցընէ լացող հոգիներ,
Ուր հեռազետէ յոյսեր կը մարին,
Եւ կ'անհետանան ոսկի պատրանքներ.

Փողոցներուն մէջ՝ ուր մուլին չոքած լուս գեղեցկութեամբն իր սարսափելի,

Անօթի, հիւանդ զուներն են պառկած,
Աղմուկն անձրէին տակաւ կը մարի՛:

Բայց նորէն, ափսո՞ս, խաւարին մէջէն կորած պատկերներ կը վերածնին,
Ցելսին մէջ ինկող շուներ կը հաշեն,
Մահուան դող ունի ժըպիտը լուսնին:

— Ա՛խ, ինչ լաւ կ'ըլլար, գերեզմաններ թաց,

Զեր լրութեան մէջ հոգիս պարպըւէ՛ր,
Իրրե թունաւոր բաժակ մը յորդած,
Ուր կեանքը միայն ձանձրոյթ է ծընե՛ր...
«Երազներ-Ճառագայթներ»

ԱՐՄԵՆ-ԵՐԿԱՐ

Անտիպ

Ճ Ճ Ճ

Ք Ա Ն Ե Ց Ա Ա Խ Թ Ա Խ Ն

Գեղեցկութիւն, քու մեհեանիդ մարմար:
Կ'ուզեմ բերել բոլոր վարդեւը գարնան
Ու ծընրազիք՝ ուփատաւորի մը նըման,
Հընչեցընել ըընար մ'ոսկի լարեք:

Գեղեցկութիւն, ծիրանի շլթն աստղերէ
կաթած մեղմիկ մազաղաթի մը վըրան,
Հումկու թըրուիչն արուեստներու Մլտած
ման,

Ատրուշան՝ զոր միտքն Հանճարին կը վա-
ռէ:

Արձանիդ քով՝ ուր Արշալոյսն է փըռուեր,
Թո՞ղ որ պարպեմ յակինթներու կողով-
ներ,

Եւ իմ հոգին, իրրե բաժակ մը լոյսի,

Բիւրեղի պէս վըճիտ, լեցուն Արեով,
Թու շըլացման զողղըղանքին մէջ հոսի
Երգի մը պէս զաշնակօրէն հատնելով...
«Հնչեակներ ու ոսկի բոցեր»

Անտիպ